

փաղը ես այս տեղ չեմ լինի, ներիր: (Երեւան դաշնութեան մէջ անդամ էւ, ուղիւն զի նայէ Ադամայէ վերայ):

Ա. Գ. Ա. Թ. Ա.

Հաւը, հայր, (ընկնութեան բաղկանութեան վերայ):

(Վահագոյն իջնութեան վերայ):

(Երեւան մէջէ)

(Թարգման. Օ. Տէր Զաքարեանց.)

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Անուրանալի է որ արևմտեան եկեղեցիք հետաքրքրվումեն արեւելեան աղգերի վիճակով: Բողոքական և կաթոլիկ քարողիչները աշխատումեն արևելեան աղգաց հոգու փրկութեան համար, ջանալով նոցա քրիստոնէական հաւատոյ լուսով լուսաւորելու: Ի հարկէ լաւ նպատակ է այդ միայն հեթանոսների վերաբերութեամբ. բայց ընդհանրակառակն, այդ քարողիչները աշխատումեն քրիստոնեաներին՝ նոցա մայրենի եկեղեցուց յափշտակելով՝ իրանց ցանցերի մէջ խեղգել, և արդէն քրիստոնէական հաւատոյ լուսով լուսաւորուած քրիստոնեաների մէջ երկարաւակութիւն ձգելով՝ ներքին խուսվութեամբ տոգորել և թունաւորել նոյա ընտանեկան խաղաղութիւնը:

Գոնէ այս անգամ՝ դորա հակառակն ենք տեսնում անգղիական եպիսկոպոսական եկեղեցու վերաբերութեամբ և ահա.

Անցեալ Օգոստոս ամսի վերջերին Մայր Աթոռու ժամանեց Անգլիոյ Նախագահ, Քէնդրապրիի Արքեպիսկոպոս և Մետրապոլիտ Տ. Եղուարդ Կանտուարի Պատուիրակը որ գնումէր այցելելու Պարսկաստանի և Քիւրգատանի քրիստոնեաներին. վերահասու լինելու նոյա դրութեամբ և ստուգելու թէ, նոքա օգնութեան կարօտութիւն ունին և թէ այդ օգնութիւնը յե՞ն կարող հայթայթել նոցա մերձաւոր քրիստոնեայքը:

Քէնդրապրիի Արքեպիսկոպոսը հարկ էր համարել յատուկ թղթով իւր յարգանաց հաւասարիքը մատուցանել և Մայր Աթոռոյս Գահակալ ամենայն Հայոց Հայրապետին, որի մահուան պատճառով Տեղակալ Տ. Մկրտիչ Արքազան Արքեպիսկոպոսը ստացաւ թուղթը, որի մէջ մասգրութեան արժանի են հետեւալ բառերը «Ըղձամք

զի ամենայն եկեղեցիք սուրբք զօրասոցին և լուսաւորեսցին հոգւովն Աստուծոյ և մը լիցին յափշտակեալք ի միմեանց, առ ի բաժանումն հաւատացելոց ի մայրենի եկեղեցեաց իւրեանց ։ Քէնդրպիի Արքեպիսկոպոսի այս խօսքը արդէն ցոյց է տալիս որ անգլիական եպիսկոպոսական եկեղեցին հեռի է հաւատացեալներին իրանց մայրենի եկեղեցուց բաժանելու նպատակից և յանդիմանումէ նոցա, որոնք հետամուտ են լինում ի բաժանումն հաւատացելոց՝ ի մայրենի եկեղեցեաց իւրեանց ։

Հարկ ենք համարում Քէնդրպիի Արքեպիսկոպոսի թղթի և Ամենապատիւ Տեղակալ Արքազան հօր պատասխանի հաւատարիմ թարգմանութիւնները հրատարակել ի գիտութիւն ընթերցողաց։

Թուղթ Արքեպիսկոպոսին Քէնտրպի։

Ի Պալատն Լամբէթեայ։

Եղուարդ, Նախախնամութեամբն Աստուծոյ Արքեպիսկոպոս Քէնտրըբի, Նախագահ ամենայն Անգլիոյ և Մետրապօլիտ։

Առ յօյժ սիրեցեալ Եղբայրն մեր ի Հոգի սուրբ Արքազան Հայրապետ և Վեհափառ Կաթողիկոս ամենայն Հայոց և Պատրիարք Սրբոյ Վանուցն Էջմիածնի։

Ենորհք ընդ Զեղ և Խաղաղութիւն յԱստուծոյ։

Ուրախ եմք ընդ բարեբարդ պատեհութիւնն յառաջացեալն ըստ ինքեան յորում պարտ յանձին Համարեցաք յայտ առնել սրբութեան Զերում զսէր մեր Եղբայրական և զՀամակրական։ Նա մանաւանդ զմեծարանս զոր ունիմք առ Զեր Անձնաւորութիւն և առ Պաշտօնն, որ պարտաւորէն զմեզ մաղթել ի Տեառնէ ի վերայ Սրբութեան ձերոյ և ի վերայ ստանձնեալ Հօտիդ զօրհնութիւն ամենասուրբ և անբաժանելի Երրորդութեան։

Սիրեցեալ որդեակն մեր ի Քրիստոս, Ատհէլսալն Յայլի, վարժապետ Արուեստից ի Պէմբրոկ Դպրանոցին որ ի Համալսարանին Օքաֆորդի՝ յանձնարարեալ է առ մէնջ յայց Ելանել առ Քրիստոնեայս բնակեալս ի Քիւրդս և ի Պարսս, առ ի հասու լինել զկացութենէ նոցին և իրազեկ այնո՞ւ եթէ իցեն նոքա կարօտեալք իմլիք և թէ զպէտոս իւրեանց կարո՞ղք իցեն հայթայցթել ի մերձաւոր Եղբարց իւրեանց ի քրիստոնէից անտի, որք ենն ի կողմանս յայնոսիկ։

Սակա որոյ՝ անդէպ թուեցաւ մեղ առ զբամբ հոչակաւոր վանուցն Սրբոյ Էջմիածնի անցանել մերոյ Պատգամաւորին՝ առանց

Հատուցանելոյ զպարտուպատշաճն այն յարգութիւն յոտս սրբութեան Զերոյ՝ առ բերելով միանգամայն զգիր մեծարանաց յղեալս առ ի մէնջ, յորում յայտ առնեմք զսէր մեր առ Եկեղեցիս Արեւելեայո, նա մանաւանդ մասնաւոր իմն առ Եկեղեցին Հայոց՝ հիմնադրեալն և կանգնեալն Աստուծով ի ձեռն Սրբոյն Գրիգորի Առաւուրչի:

Ըղձամք զի ամենայն Եկեղեցիք սուբբք, զօրասցին և լուսաւորեսցին Հոգւուխն Աստուծոյ, և մի լիցին յափշտակեալք ի միմեանց առ ի բաժանումն հաւատացելոցն ի մայրենի Եկեղեցեաց յւրեանց՝ որ ի Քրիստոս. այլ Եղիցին կապեալք ընդ միմեանս յօդիւ միութեան և սիրոյ, և Եղիցին կատարեալք ի հաւատս, ի յոյսն մեր և ի միջնորդն և Փրկիչն Յիսուս Քրիստոս ի Տէր մեր:

Յանձնելով զսիրեցեալ որդեակն մեր Ատհէլստըն Ռայլին ի հոյրագութ ինաման Զերումդ Սրբութեան մաղթեմք վասն Զեր զամն ձիգս և երջանկաւէտս, հայցելով ի Տեառնէ զի զտրիտուր քըրտանց Զերոց գտնիք ի հոգիս քրիստոնէից՝ ժողովելոցն ի փարախ հովուութեան Զերոյ որ ի Քրիստոս. և մեք Եղիցուք միշտ և հանապազ Զերումդ Սրբութեան հաւատարիմ աղօթարար և Եղբայր ի Քրիստոս յԱստուած մեր:



(Ստորագրութիւն)
Եղ. Կանտուար.

Տուաւ ի մերում Պալատան Լամբեթեայ ի Լոնդոն. և կնքեցաւ Արքեպիս կոպոսական Կնքով յութերորդի (Ն. Տ.) աւուր ամսոյն Օգոստոսի, յամի թուականի Փրկչին մերոյ ի 1884:

Պատասխանի.

Մկրտիչ, Ողորմութեամբն Աստուծոյ Սրբեալիսկոպոս և Տեղակալ Ատենապետի Սինոդի Ս. Էջմիածնի.

Նորին Սրբազնութեան Տ. Տ. Աշքեպիսկոպոսի Քենդըրապըրի և Մետրապոլիտի և Նախագահին ամենայն Անգլիոյ Եղբօր Մերոյ Արքեցելոյ.

Նորհք ընդ Զեղ և խաղաղութիւն յԱստուծոյ.

Եղբայրական սիրոյն քարտէզ աւանդեալն մեզ ի ձեռն հաւատարմի առն Տեառն Ատհէլստըն Ռայլի, ուրախացոյց զմեզ ոչ սակաւ. նա մանաւանդ մասն այնր գրութեանն որ ակնարկէրն յաւէտ զշամակրանս Անգլիական Եկեղեցւոյն առ մերն Եկեղեցի:

Վասն որոյ և մեք ի մեր կողմանէ ի նոյն սէր փոխադարձ վտահան զանելով փութամք յայտնել և դմերն ակնածութիւն ի վերայ եկեղեցւոյն այնորիկ, յորոյ վերայ Նախախնամութիւնն Աստուծոյ Տեսուչ զանել կացուցանէ:

Եւ ևս առաւել բարւոք մոտաց Արբազնութեան Զերոյ ի թղթոյ անտի տեղեկացեալք, խնդամք մեծապէս, զի զգութ խնամոց Զերոց ընդարձակել կամելով առ աղքատս և տնակս գտեալս մինչեւ ի սփիւռս, առ ի բարւոք տնտեսութիւն կարեաց նոցին ի հեռաւոր վայրս զ՞ննիչ պաշտօնեայն առաքել յօժարիք: զի զպէտս նոցին լնուլ մարթասցէ:

Ամենաբարին Աստուած Հատուացէ Զեղ ի գանձուց շնորհաց իւրոց զփոխարէնն զիւցազնական Զերումդ առաքինութեան վասն գթոյն այնորիկ զոր տածէքդ ի վերայ քրիստոնէիցն տառապելոց, որք ընդ ծանր լուծով հեծեն անհաւատից:

Հուսկ ուրեմն զեղբայրականն մեր սիրելութիւն պարզելով առաջի Զերումդ Արբազնութեան՝ մաղթեմք ի Տեառնէ զԱստուածային զմշտառատ օրհնութիւն ի վերայ Զերումդ Արբազնութեան, և ի վերայ ամենայն Հօտիդ՝ որ ի խնամն Զեր է յանձնեալ:

Զերումդ Արբազնութեան սիրեցեալ եղբայր
և անձանուէր բարեկամ ի Քրիստոս Աս-
տուած մեր և Տէր,

Տեղակալ Ատենապետի Սինօդի ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ.

Ի Ա. Էջմանին

(Բայ Հոգ առօ.) Սէպտ. 21, 1884.

ՊԱՇՕՆԱԿԱՆ

(ՍԻՆՈԴԻ ՅՈՒԼԻՍ ԱՄՍՈՑ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՔԱՂԱԿԱՆՔ)

Վ. Ա. Բ. Ա. Կ. Ա. Կ.

23 Յուլիսի. Ալէքսանդրապոլու հոգեոր կառավարութիւնը ի 10-ն Հոկտմ. անցեալ 1883 ամի յայտարարութեամբ ներկայացնումէ Սինօդին Հաճի - Նազարյի Մանուկ Ստեփանեանի խնդիրը, որով յիշեալ անձն զանազան բարուրանօք գանգատում է, թէ իւր բացակայութեամբ